## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32
Հեռ. ( 0237) 2-36-54

Ի պատասխան Ձեր ______________ N__________          20.12.12թ N 1208

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ներկայացվում է Արմավիրի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեն՝ հաստատված քաղաքային համայնքի ավագանու 18.12.2012թ. թիվ 135-Ն որոշմամբ:

Առդիր 53 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԽԼՂԱԹՅԱՆ

Կատարող՝
Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
Հեռ.՝ 2-31 - 76

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ ԱԲ/11585-12
«20» 12 2012 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32, հեռ. (0237) 2-36-54

## Ո Ր Ո Շ Մ Ա Ն  Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«18» դեկտեմբերի 2012 թվականի N 135-Ն

## ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

1.Հաստատել Արմավիրի քաղ. համայնքի 2013թ. բյուջեի եկամուտները ըստ եկամտատեսակների՝ հատված 1-ին համապատասխան (հավելված N 1)

Ընդամենը՝ 675415,6 հազար դրամ.

2.Հաստատել Արմավիրի քաղ. համայնքի 2013թ. բյուջեի ծախսերը՝ հատված 2-ում ներկայացված գործառնական դասակարգման համապատասխան (հավելված N 2)՝

Ընդամենը՝ 675415,6 հազար դրամ.

3.Հաստատել Արմավիրի քաղ. համայնքի 2013թ. բյուջեի ծախսերը՝ հատված 3-ում ներկայացված տնտեսագիտական դասակարգման համապատասխան (հավելված N3)

Ընդամենը՝ 675415,6 հազար դրամ.

4.Հաստատել Արմավիրի քաղ. համայնքի 2013թ. բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ պակասուրդը (դեֆիցիտը) հատված 4-ին համապատասխան (հավելված N 4)

Ընդամենը՝ 0.0 հազար դրամ.

5. .Հաստատել Արմավիրի քաղ. համայնքի 2013թ. բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորման աղբյուրները հատված 5-ին համապատասխան (հավելված N 5)

Ընդամենը՝ 0.0 հազար դրամ.

6.Հաստատել Արմավիրի քաղ. համայնքի 2013թ. բյուջեի ծախսերը՝ հատված 6-ում ներկայացված գործառնական և տնտեսագիտական դասակարգման համապատասխան (հավելված N 6)

Ընդամենը՝ 675415,6 հազար դրամ.

7. Սույն որոշման NN 1 - 6 հատվածները համարվում են սույն որոշման անբաժանելի մաս:

8. Թույլատրել Արմավիրի քաղաքապետին՝ «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, համայնքի 2013թ. բյուջեի կատարման ընթացքում կատարել 30 %-ի չափով վերաբաշխումներ: Սույն փոփոխությունները կատարել այնպես, որ բյուջետային տարվա ընթացքում կատարված փոփոխությունների հանրագումարը չգերազանցի սահմանված չափաքանակները:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԼՂԱԹՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ